community

The New Apostolic Church around the world

02/2019/AM

Այց Ինդոնեզիա

Խմբագրական՝ Չհրաժարվել խոստումից

Ժամերգություն՝ Հարուստ՝ Քրիստոսով

Եկեղեցական ուսմունք՝ Քրիստոսի եկեղեցին

New Apostolic Church
International

Չհրաժարվել խոստումից

Լուսանկարը՝ Միջազգային ՆԱԵ

Սիրելի հավատացյալ քույր-եղբայրներ,

Աստված մեզ մի խոստում է նվիրել՝ նա ուզում է մեզ օրհնել: Եկեք այդ օրհնանքը ճիշտ հասկանանք և մյուսների հետ կիսենք: Մենք իրավունք չունենք հրաժարվել այդ խոստումից:

Աստվածային օրհնանքը ճանաչելն այն է, որ Աստված տալիս է մեզ այն, ինչը մեզ անհրաժեշտ է, մեր հավիտենական փրկությանը հասնելու համար: Նա մարդու համար հնարավոր է դարձնում իր հետ հավերժ լինելը: Նրա օրհնանքն է մեզ՝ իր արքայությունը և, ի վերջո, իր հետ հավիտենական միասնությունը:

Աստվածային օրհնանքը կիսելը՝ Աստված տալիս է մեզ, որպեսզի մենք էլ մերձավորին տանք: Մենք պետք է մեր հոգևոր հարստությունը կիսենք մեր մերձավորի հետ արդեն այսօր, մեր կյանքում, իսկ հետո՝ նաև Աստծո արքայությունում: Մեր ցանկությունն է, որ մարդիկ կարողանան գալ դեպի Աստված :

Մեր առաջադրանքը այդ խոստումը պահելն ու այն մեր երեխաներին, մեր մերձավորին փոխանցելն է՝ ,,Վստահի՛ր Աստծուն: Նա քեզ օրհնելու է,,:

Սիրելի քույր, սիրելի եղբայր, ձեր առաջադրանքն է նաև, որ այդ օրհնանքը ճանաչվի և կիսվի: Խնդրում եմ, որ չդադարեք այդ օրհնանքի ճանաչումը կամենալը և դրա մասին ձեր մերձավորի հետ խոսելը:

Եթե մենք հավատարիմ մնանք Հիսուս Քրիստոսին, նա մեզ կօրհնի և մեզ կդարձնի օրհնանքի աղբյուր: Մեր սրտի ցանկությունն է, որ մենք նրա խոստումը ապագա սերնդին փոխանցենք:

Ձեր՝

Ժան-Լյուք Շնայդեր

2019-ի հունվարի 6-ին՝ կիրակի օրը, գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը Բերն- Օսթերմունդիգենում/ Շվեյցարիա/ հավատացյալ իր քույր-եղբայրների հետ անցկացրեց ժամերգություն: Նրան ուղեկցում էին շրջանային առաքյալ Յուրգ Զբինդեն/ Շվեյցարիա/, առաքյալ Մանուել Լուիսը / Պորտուգալիա/, առաքյալ Ուլի Ֆալկը / Գերմանիա/, ինչպես նաև այլ առաքյալներ և եպիսկոպոսներ Շվեյցարիայից:

Լուսանկարը՝ Յոնաս Շինեգերի և Մարկ Գենտարսի

Հարուստ՝ Քրիստոսով

Կորնթացիներին Ա 1,5-7

„ ...,որովհետև ամեն բանի մեջ դուք նրանով հարստացաք՝ ամեն խոսքով և ամենայն գիտությամբ, ինչպես որ Աստծո վկայությունն իսկ հաստատվեց մեր մեջ: Դուք պակաս չլինեք և ոչ մի շնորհից՝ սպասելով մեր Տեր Հիսուս Քրիստոսի հայտնությանը„:

Սիրելի քույր-եղբայրներ: Սա մի գեղեցիկ սկիզբ է, որ մենք այս տարվա առաջին կիրակի օրը հավաքվել ենք, որպեսզի, ինչպես երեխաները այսպես գեղեցիկ երգեցին, գովաբանենք և փառաբանենք Տիրոջը: Սրանով մենք խոստովանում ենք մեր հավատը ամենազոր Աստծու հանդեպ: Հաճելի է տարին սկսել այն գիտակցությամբ ու վստահությամբ, որ Աստված միշտ ամենազորն է: Այս տարի ոչ մի այնպիսի բան տեղի չի ունենա, որը ինչ որ ձևով խոչընդոտ կհանդիսանա փրկության պլանի ճանապարհին: Նա հոգալու է այն բանի համար, որ իր պլանը անխաթար առաջ տանի: Նա սիրո Աստված է և նրա պլանն է քեզ և ինձ ու էլի շատ մարդկանց, ովքեր ևս դա են ուզում, տանի դեպի իր հետ միասնության: Աստված անսահման հարուստ է սիրով և բարությամբ:

Նա ուզում է օգնել բոլոր մարդկանց: Նա ուզում է բոլոր մարդկանց իր հետ միասնության տանել: Նրա փառահեղությունը գերազանցում է ամեն ինչ, ինչ մենք կարող ենք պատկերացնել: Քանի որ Աստված այդքան հարուստ է իր փառահեղությամբ, սիրով և բարությամբ, նա ուզում է, որ մենք բոլորս մասնակիցը դառնանք նրա արքայության: Դա է նրա նպատակը: Նա է մարդկանց արարել, որպեսզի նրանց հետ կատարյալ միասնության մեջ ապրի: Նա հոգում է այն բանի համար, որ յուրաքանչյուր մարդ հնարավորություն ունենա մասնակիցը դառնալ իր արքայության: Դա կախված է հենց մարդուց՝ ուզում է նա դա, թե՝ ոչ:

Տարվա մեր նշանաբանն է՝ հարուստ՝ Քրիստոսով: Մենք ցանկանում ենք Աստծո հարստությունը: Մենք ուզում ենք Աստծով հարուստ լինել: Որպեսզի Աստծով հարուստ լինենք, որպեսզի ձեռք բերենք նրա հարստությունը, նա գցել է մեկ ճանապարհ: Չկա 200 ճանապարհ, կա միայն մեկ ճանապարհ: Այդ ճանապարհը կոչվում է Հիսուս Քրիստոս: Աստծո Որդին երկիր է եկել և մարդացել: Նա իրեն հավասարեցրել է մարդկանց, որպեսզի հայտնվի նրանց, թե ով է և ինչպիսին է Աստված ընդհանրապես, ինչ է նա մտադրվել և ինչքան մոտ է նա: Իր զոհաբերական մահով և հարությամբ նա նախապատրաստել է ճանապարհը, որպեսզի մարդիկ կարողանան Աստծո արքայություն գնալ: Եթե դուք ինձ հետևեք, կարող եք Աստծով հարստանալ և հասնել այդ հարստությանը: Աստծո հարստությունը աստվածային բարությունն է և աստվածային հարստությունը: Մեզնից է կախված միայն՝ -ուզում ե՞նք մենք հարուստ դառնալ:

Մենք մտորում ենք տարվա նշանաբանի շուրջ, թե ինչպես կարող ենք Աստծով հարուստ դառնալ: Ինչի՞ց է բաղկացած Քրիստոսով հարստությունը: Ինչպե՞ս կարող ենք մենք կիսել այդ հարստությունը: Իմ ցանկությունն է, որ այս թեման արծարծվի քարոզում, անգամ, եթե դա ընդգրկված չէ հիմնական մտքերում: Դա պետք է քարոզում արծարծվի, որպեսզի համայնքները և քույր-եղբայրները ուշադրություն դարձնեն դրա վրա: Սուրբ Հոգին քույր-եղբայրների, երիտասարդների շրջանում, երեխաների մոտ շատ մտքեր է արթնացնելու, որոնք կօգնեն ամրագրելու այս կամքը՝ այո, ես ուզում եմ Քրիստոսով հարուստ լինել:

Ինչպե՞ս կարող ենք Քրիստոսով հարուստ լինել: Առաջին պայմանն այն է, որ մենք հավատանք Քրիստոսին: Առանց դրա ոչինչ չի լինի: Աստծո մոտ գնալու միայն մեկ ճանապարհ կա: Այդ միակ ճանապարհը Հիսուս Քրիստոսն է, և մենք պետք է նրան հավատանք: Այստեղ Պողոսն ասում է, որ Քրիստոսի մասին քարոզը պետք է մեր մեջ ուժգին լինի: Մենք հավատում ենք Հիսուս Քրիստոսին, Հիսուս Քրիստոսի մարդացմանը, նրա զոհաբերական մահին և նրա հարությանը: Մենք հավատում ենք նրա խոստմանը՝ ես գալու եմ նորից, որպեսզի ձեզ ինձ հետ տանեմ: Մենք հավատում ենք նրա ուսմունքին և նրա Ավետարանին: Դա է ճշմարտությունն ու ճանապարհը օրհնվելու համար: Դա է ճանապարհը, որպեսզի Աստծո մոտ գնան և աստվածահաճո լինեն- դրան հավատում ենք մենք: Այդ հավատը չի կարող միայն ,, ճիշտ համարելու,, համար լինել: Աստծո Որդին մարդացավ, նա մահացավ և հարություն առավ՝ ես քրիստոնյա եմ, ես հավատում եմ դրան: Ես հավատում եմ, որ ինչ որ մի ժամանակ Աստծո Որդին նորից էգալու, ես հավատում եմ Ավետարանին և Աստծո խոսքին: Միայն ,, ճիշտ համարելը,, մեզ հարուստ չի դարձնի; Ժամերգության հաճախելը, ավանդական հավատքը, որ նորառաքելական են և հաճախում են Նորառաքելական եկեղեցի ևս բավական չեն, որ հարստանան: Հիսուս Քրիստոսի մասին քարոզը պետք է ուժգին լինի, դա նշանակում է, որ Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատը մեր մեջ ուժ պետք է դառնա, պետք է ապրի մեր մեջ: Այդ հավատը պետք է դրդապատճառ լինի ասելու՝ այո, մենք ուզում ենք գնալ դեպի Հիսուս Քրիստոս, մենք ուզում ենք գործել նրա կամքի համաձայն: Մենք ուզում ենք դառնալ նրա նման: Եկեք ապրենք Հիսուս Քրիստոսով: Մենք ուզումենք ոգևորված լինել, որ Աստծո Որդին մեզ համար է մարդ դարձել, որ նա հաղթել է մահին ու սատանային, որ նա որպես առաջինը հարության մարմնով երկինք բարձրացավ: Մենք պետք է ոգևորված լինենք նրա խոստմամբ՝ ես գալու եմ նորից և այդ ժամանակ դուք կարող եք ինձ մոտ լինել: Մենք պետք է վստահ լինենք ուսմունքի և Ավետարանի հանդեպ: Հիսուս Քրիստոսի մասին այդ քարոզը պետք մեր մեջ ուժգին լինի, այլապես չենք կարող Աստծով հարուստ լինել: Եկեք միշտ այն բանի համար հոգանք, որ Հիսուս Քրիստոսը մեր սրտում ուժ դառնա: Չնայած այն ամենին, ինչը մենք ապրում ենք, այն ամենին, ինչը

Մենք պետք է ծառայենք Աստծուն- յուրաքանչյուրն իր տեղում:



մեզ առաջարկում է աշխարհը, մենք չպետք է մոռանանք, որ Աստված մարդացել է: Նա մահացել է մեզ համար, նա առաջինն է երկինք համբարձվել, նա գալու է նորից: Դա պետք մեր մեջ ոգևորություն առաջացնի- այն պետք է մեր մեջ վառվի:

Պողոսն ասում է՝ Աստված աղքատացավ, որպեսզի մենք կարողանանք հարստանալ: Նա աղքատ մարդ դարձավ, որպեսզի մենք կարողանանք հարուստ դառնալ: Նա իրեն աղքատացրեց, որպեսզի մենք կարողանանք հարուստ դառնալ: Ի՞նչ պետք անենք մենք, որ Աստծով հարստանանք: Հիսուսը Լեռան քարոզի հենց սկզբում ասել է՝ երանի նրանց, ովքեր հոգով աղքատ են, նրանցն է երկնքի արքայությունը: Այդ ժամանակ նրա քարոզի առաջին բաղադրիչը դա էր: Հոգով աղքատ լինել չի նշանակում, որ մենք պետք է հիմար լինենք: Իսկ ինչպե՞ս կարող ենք հոգով աղքատ դառնալ: Հոգով աղքատը նա է, ով բավականին խոնարհ է, որպեսզի հնազանդ լինի: Նա չի գործում իր սեփական կամքի համաձայն, այլ գործում է Աստծո կամքի համաձայն: Նրա համար Աստծո պատվիրաններն լավագույնն են, որ կան: Նա իր կյանքը ձևավորում է դրանց համաձայն և մնում է հնազանդ: Շատ մարդկաց համար այդ պահանջը շատ է: Նրանք թույլ են տալիս իրենց ինքնուրույն որոշելու, թե երբ կարող են գործել կամ չգործել պատվիրանների համաձայն, կամ երբ կարող են օգնելու պատրաստ լինել: Նման մարդը հոգով աղքատ չէ, նա չի կարող օրհնված լինել և Աստծով հարուստ դառնալ: Խոնարհը, հոգով աղքատը ասում է՝ Աստված ավելի լավ գիտի- ես կպահպանեմ պատվիրանները, ինչ էլ լինի, դա ինձ համար լավագույն ճանապարհն է: Ուրեմն՝ նա է հոգով աղքատը: Մենք պետք է աղքատ և հնազանդ լինենք, որպեսզի հարստանանք: Մեկ այլ ասպեկտ է այն, որ Հիսուսը չի եկել, որ իրեն ծառայեն, նա եկել է, որպեսզի մեզ ծառայի: Նա խոնարհ է և ծառայել է մեզ: Որպեսզի հարուստ դառնանք, մենք պետք է Աստծուն ծառայենք և աշխատենք: Հիսուսը շատ է խոսել աշխատանքի մասին: Եթե դու ուզում ես Աստծով հարստանալ, դու պետք է ծառայես, աշխատես և ջանք թափես: Այս առումով շատ առակներ կան՝ Անիրավ տնտեսի առակը, Երեք ծառաների առակը, Մշակների առակը: Հիսուսը հաճախ է այս թեմայով խոսել: Դու կարող ես քո փրկությունը չվաստակել, բայց դու պետք է

Տիրոջը ծառայելը մեր կյանքի առաջնայնությունն է:

աշխատես, դու պետք է ջանք թափես-այլապես դու չես հարստանա: Եթե մենք ուզում ենք այս տարի հարստանալ, ապա մենք պետք է աշխատենք, պետք է ինչ որ մի արդյունքի հասնենք: Մենք պետք է ծառայենք Աստծուն- յուրաքանչյուրն իր տեղում: Երեք ծառաների առակը շատ հետաքրքիր է՝ տերը ծառաներից մեկին տալիս է հինգ քանքար, մյուսին՝ երկու, երրորդին՝ մեկ: Ինչու՞ նա այդպես որոշեց: Հինգ քանքար ստացածը աշխատել էր և ունեցածին հինգ էլ ավելացրած՝ եկել : Երկու քանքար ստացածը աշխատել էր և երկուսն էլ ավելացրել: Մեկ քանքար ստացածը հողում պահել էր դրամը, ծույլ էր, չէր աշխատել և ոչինչ չէր ստացել: Նրանք, ովքեր ստացածից ավելի շատ էին աշխատել, նրանք այդչափով էլ ավել վարձատրություն ստացան: Հիսուսը սրանով ուզում էր ցույց տալ, որ կարևորը աշխատանքն է:

Կան համայնքներ, որոնք շատ մեծ են, շատ ակտիվ, նրանք կարողանում են հրաշալի պարապմունքներ անցկացնել, տեղեկացված են և հավատի մեջ ամուր, նրանք ունեն մեծ երգչախումբ, երաժշտությունը միշտ կա: Նրանց երրորդ սերունդ էլ նորառաքելական է և շատ բան են ձեռք բերել: Մյուսները երեկ չէ առաջին օրն են կնքվել, պատկանում են փոքր համայնքի՝ բաղկացած չորս անդամից: Նրանք ունեն քարոզիչ, ով աստվածաբանական կրթություն չունի, նա տալիս է իր լավագույնը, սակայն լավ չգիտի Աստվածաշունչը: Սիրելի Աստված այստեղ նույն արդյունքը չի ակնկալում: Ում նա շատ է տալիս, նրանից շատ սպասելիքներ ունի: Ում ինչ որ պատճառով քիչ է տվել, նրանից քիչ է պահանջում: Սակայն նա բոլորից սպասում է, որ բոլորն էլ եռանդուն աշխատեն: Եկեք եռանդուն աշխատենք մեր փրկության համար, եկեք եռանդուն ծառայենք Տիրոջը, դա է մեր առաջնայնությունը, մեր հոգու փրկությունը- Տիրոջը ծառայելը մեր կյանքի առաջնայնությունն է: Ով այդպես է աղքատ, ով այդպես է ծառայում, նա կարող է Հիսուս Քրիստոսով հարուստ լինել:

Է՞լ ինչպես կարող ենք մենք հարստուտ դառնալ: Կան շատ հնարավորություններ: Օրինակ, ոչ ոք չի կարող իրեն օրհնել: Այդպես չի լինի, դա գրված է մեր դավանաբանության մեջ և դա քրիստոնեական իմացություն է: Որպեսզի օրհնանք ստանանք, անհրաժեշտ են ծառայողներ, սպասավորներ, որոնց Աստված է ուղարկում ու կանչում, որպեսզ մեզ օրհնանք տան : Նրանք ձեռնադրված սպասավոր եղբայրներն են, ովքեր անց են կացնում ժամերգություններ և նվիրաբերում են օրհնանք: Մեկ օրինակ՝ այրին իր երկու որդիների հետ մեծ պարտքեր ուներ: Նրա ամուսինը մահացել էր, նա շատ դժվար վիճակում էր: Եղիա մարգարեն գալիս է նրա մոտ և ասում՝ ես կարող եմ քեզ օգնել, ի՞նչ ունես դու տանը: Նա ասում է, որ ունի միայն մի կճուճ յուղ: Նա պատասխանում է՝ գնա հարևաններիդ մոտ և բեր այնքան կճուճներ, որքան դու կարող ես բերել: Նա գնում է բոլոր հարևանների մոտ և բոլոր կճուճները բերում, բոլորը լցվում են յուղով, ոչ մի կճուճ դատարկ չի մնում: Հետո նա վաճառում է այդ յուղը և դուրս է գալիս դժվար վիճակից: Եթե նա ասեր, որ հարևանների կճուճները մաքուր կամ գեղեցիկ չեն, ապա նա ավելի քիչ յուղ կունենար: Նա օգտագործեց անգամ այն կճուճները, որոնք իր տնտեսությանը չէին պատկանում:

Սիրելի քույր-եղբայրներ, մենք չենք կարող միշտ սպասել, որ սիրելի Աստված մեզ համար սպասավոր եղբայրներ ուղարկի, որոնք հենց մեր պատկերացումներին են համապատասխանում: Եկեք բոլորս ընդունենք այն, ինչ Աստված տալիս է մեզ: Ինչքան հաճախ մենք դրանք ընդունենք, այնքան շատ օրհնանք կարող ենք ընդունել: Այսպես կարող ենք մենք հարստանալ: Եկեք խոր հավատ ունենանք, եկեք հնազանդ լինենք, դա հարուստ դառնալու ճանապարհն է: Եկեք ընդունենք այն եղբայրներին, որոնց Աստված ուղարկում է մեզ համար:

Մենք պետք է նաև մեր շնորհակալությունն ու վստահությունը վկայենք մեր զոհաբերությամբ: Դա ևս մշտական թեմա է Աստվածաշնչում- հարուստ

է նա, ով հավատարիմ է զոհաբերության մեջ: Խոսքը ամբողջ աշխարհում գտնվող եկեղեցիների ֆինանսների մասին չէ: Խոսքը նրա մասին է, որ մենք զոհաբերում ենք որպես մեր շնորհակալության և Աստծուն վստահելու նշան: Ով հոգով աղքատ է, նա գիտի հետևյալը՝ ես ոչինչ չեմ վաստակել – ամեն ինչ, որ ես ունեմ, ես ընդունել եմ ողորմածությունից: Դա Աստծո ողորմածությունն է, որի համար ես շնորհակալ եմ, իսկ իմ զոհաբերությունը իմ շնորհակալության արտահայտությունն է: Հոգով աղքատն ասում է՝ սիրելի Աստված, ես քեզ տալիս եմ քո բաժինը և գիտեմ, որ դու հոգում ես ինձ համար, դու ինձ տալու ես այն, ինչի կարիքն ես իսկապես ունեմ: Եկեք մեր զոհաբերությունը կատարենք: Խոսքը դրամի և ֆինանսների մասին չէ: Զոհաբերությունը մեր շնորհակալության և Աստծուն մեր վստահության արտահայտությունն է: Աստված խոստացել է՝ ով զոհաբերում է, նա կօրհնվի, քանի որ նա օրհնում է սրտի այդպիսի վիճակը, ոչ թե՝ փողը: Սրտի վիճակը, հոգով աղքատությունը, ամեն ինչ գալիս է քեզնից – ես դրա համար շնորհակալ եմ: Դու ես, որ հոգում ես ինձ համար և ես վստահում եմ քեզ:

Եկեք հարուստ դառնանք Քրիստոսով: Դրա համար մենք պետք է, իհարկե, մեզ սրբացնենք և անենք այն, ինչը աստվածահաճո է: Տեր Հիսուսն ասում էր՝ ով ուզում է ինձ հետևել, պետք ինքն իրեն ուրանա: Մենք երբեմն այնպիսի մտքեր ենք ունենում, որոնք ոչ վատն են , ոչ էլ՝ սխալ, սակայն դրանք չենք համապատասխանում Հիսուս Քրիստոսին: Սրտի վիճակը, հավանաբար ավանդույթները, չեն համապատասխանում Ավետարանին: Մենք չենք ուզում անընդհատ դրա շուրջ բանավիճել, թե ինչն է ճիշտ, ինչը՝ սխալ: Մենք պետք է դրանցից հրաժարվենք, քանի որ դրանք Հիսուս Քրիստոսին չեն համապատասխանում: Այսպես մենք կարող ենք հարստանալ:.

Ի՞նչ է նշանակում Քրիստոսով հարուստ լինել: Կարելի մի քանի թվարկում անել: Մեկը շատ կարևոր է, Պողոսն այստեղ խոսում է այդ մասին՝ դա իմացությունն է, մենք գիտենք, թե ինչ մտադրություն ունի Աստված: Աշխարհում մարդիկ ուզում են անպայման իմանալ, թե ինչ է պատահելու, ինչ է նախապատրաստվում, ինչ է թաքնված դրա հետևում: Մարդիկ փող են ծախսում, որպեսզի ինֆորմացված լինեն,փող՝ թերթերի, ռեպորտաժների և այլնի համար: Մենք գիտենք, թե ինչ է լինելու՝ Աստված շարունակում է կատարել իր պլանը: Վերջը Աստծո հետ հավիտենական միասնությունն է նոր արարչագործության մեջ: Աստված հոգ է տանելու նրա համար, որ բոլոր մարդիկ, ովքեր ուզում են, կարողանան գնալ այնտեղ : Մոտ ապագան Տիրոջ գալուստն է: Ես հաստատ գիտեմ, թե ինչ մտադրություն ունի Աստված իմ հանդեպ: Ես չգիտեմ բոլոր փողոցները և բոլոր անկյունները,բայց ես գիտեմ ճանապարհը և գիտեմ, թե ուր է տանում այդ ճանապարհորդությունը: Ով իսկապես դրան հավատում է, նա հարուստ է: Իհարկե, մենք չենք ուրախանում այն բանի համար, որ մենք պետք է մահանանք և նաև այն դեպքում, երբ որևէ մեկը մահանում է: Բայց մենք գիտենք, թե խոսքն ինչի մասին է և ինչ է ուզում Աստված անել: Դա մի մեծ հարստություն է, որը մենք հաճախ թերագնահատում ենք: Մենք գիտենք, որ սիրելի Աստված ամեն ինչ իր ձեռքում է պահում: Ով այդպիսի ուժեղ հավատ ունի, ով հոգով աղքատ է, նա ունի այդ հարստությունը և այդ իմացությունը:

Մեկ այլ հարստություն, որի համար մենք չենք կարող ընդհանրապես վճարել, դա հետևյալն է՝ մենք գիտենք, որ մենք սիրված ենք: Մեզնից յուրաքանչյուրը սիրված է առանց նախապայմանների և կարող է ասել՝ ես գիտեմ, որ մեկը սիրում է ինձ, նա իմ Աստվածն է- անգամ, եթե ես սխալ եմ գործել, նա ինձ սիրում է: Նա ինձ չի սիրում նրա համար, որ իմ կարիքն ունի: Նա ինձ չի սիրում հետաքրքրությունից ելնելով: Նա ինձ չի սիրում, որ ես ինչ որ գեղեցիկ կամ բարի բան եմ արել, նա պարզապես սիրում է ինձ այնպիսին, ինչպիսին ես կամ: Նա սեր է, նա այլ բան չի կարող լինել: Այն զգացումն ու գիտակցությունը, որ ես

սիրված եմ, պատկանում է մեր քրիստոնեական հավատին: Դա այն հարստությունն է, որը մենք քիչ ենք արժևորում, այն կարող էր մեր սրտերում ավելի մեծ լինել: Այն ուրախությունը, որ ես սիրված եմ, միշտ պատում է մեզ: Մենք ունենք ամենալավ բարեխոսին, որ գոյություն ունի՝ Հիսուս Քրիստոսին: Նա միշտ մեզ համար ներկա է և մեզ նվիրում է իր ողորմածությունը: Նա ամենալավ պաշտպանն է, ում դու ունես: Ով հավատում է Հիսուս Քրիստոսին, կարող է ապավինել այդ պաշպանին: Նա կգա և կնվիրի իր մեղքերի ներումը:

Մենք կարող ենք ուրախանալ, որ մենք պատկանում ենք համայնքին: Մենք միայնակ չենք: Իհարկե, համայնքում ամեն ինչ կատարյալ չէ: Մեկը մեծ է, մյուսը՝ փոքր: Որոշները բարեհամբույր են, ուրիշները՝ ոչ այնքան: Որոշները մեզ նման են,մյուսները՝ բոլորովին տարբեր: Եկեք մեզ հոգով աղքատ տեսնենք – համայնքը հարստություն է: Մենք կարող ենք միմյանց համար աղոթել: Սիրելի քույր-եղբայրներ, եկեք համայնքը հոգեպես և սուրբ աչքերով տեսնենք: Դա մի միաբանություն է, որտեղ աղոթում են միմյանց համար: Մի միաբանություն, որը չնայած տարբերություններին՝ միասնություն է ստեղծում Հիսուս Քրիստոսով: Մենք չենք գիտակցում, թե ինչ մեծ է այդ հարստությունը: Եթե մենք նայենք ողջ աշխարհին՝ լինի այստեղ՝ Շվեյցարիայում կամ այլ երկրներում, ապա մենք կտեսնենք, թե ինչպես են մարդիկ ձգտում պատկանել որևէ խմբի և ինչ որ ձևով միասնության հասնել: Մենք ձուլվում ենք համայնքին: Դա մի հարստություն է, որը մենք թերագնահատում ենք: Մենք պետք է ժառանգենք մեծ հարստությունը՝ Աստծո հետ միասնությունը: Սակայն, արդեն այսօր, մենք ուզում ենք ավելի հարուստ լինել Հիսուս Քրիստոսով: Դա մենք կարող ենք, եթե միշտ հոգով աղքատ դառնանք, լինենք հնազանդ, Աստծուն նվիրված, Հիսուսին ծառայենք, խոնարհ լինեք նրանով, որ մեզ սրբացնենք: Մենք պետք է այդ հարստությունը կիսենք նաև մեր մերձավորի հետ: Դրանով մենք չենք աղքատանա: Մենք նաև ողորմածության հարստությունն ունենք: Հիսուս Քրիստոսը պաշտպանում է մեզ, նա ներում է մեզ – մի ոչ սովորական հարստություն, որը դու կարող ես փոխանցել նրանով, որ ներես քո մերձավորին: Մարդիկ մտածում են, որ եթե նրանք վրեժ չլուծեն, եթե իրենց իրավունքը չվկայակոչեն, ապա տանուլ կտան:Սակայն, մենք գիտենք, որ եթե ներենք, չենք աղքատանա, անգամ ավելի կհարստանանք: Եկեք ողորմածության հարստությունը կիսենք մեր շրջապատի մարդկանց հետ: Մենք պետք է Ավետարանը տարածենք մեր շրջապատի մարդկանց մեջ և նրանց ասենք՝ դու ևս սիրված ես: Մենք գիտենք, թե դա ուր է տանում, դու էլ ունես մասնաբաժին այդ պլանից: Եկեք խոսենք Ավետարանից և այդ ավետիսը շարունակենք փոխանցել: Աստված սեր է, նա ուզում է քեզ փրկել: Ամեն ինչ մենք ստանում ենք Աստծուց:

Մենք շնորհակալ ենք և մեր զոհաբերությունն ենք բերում սիրելի Աստծուն: Սիրելի Աստված միշտ մեզ ասում է, որ մեր կողքին ամեն ինչ չէ, որ լավ է: Այլ երկրներում էլ կան մարդիկ, որոնց վիճակը լավ չէ: Այս պարագայում կարող ենք ձեռքը գրպանը տանել և ինչ որ բան տալ: Այդ հարստությունը ևս մենք պետք է կիսենք: Քրիստոսով հարուստ լինել նշանակում է, որ մենք կախված չենք փողից: Ճշմարիտ քրիստոնյան, հնազանդ քրիստոնյան ունի ներքին խաղաղություն: Այդ խաղաղությունը կախված չէ ունեցվածքից: Այն վստահությունը, որ Աստված ինձ ամեն ինչ տալու է, ինչի կարիքը ես ունեմ, որպեսզի կարողանամ նրա արքայություն գնալ, ինձ համար ամենակարևորն է: Դա համեմատվում է փողի և ունեցվածքի կարևորության հետ: Մենք ազահության կողմնակից չենք, ինչպես այսօր շատ մարդիկ: Ով հարուստ է Քրիստոսով, նա ազատ է և չի տառապում ազահությունից կամ նախանձից: Նա պարզապես գոհ է: Նրա ներքին երջանկությունը, նրա հավասարակշռվածությունը այլևս կախված չէ իր ունեցվածքից և դրա համար էլ կարող է իր փողով օգնել, եթե դրա անհրաժեշտություն կա: Սրանում մենք դեռ ուղղվելու տեղ ունենք:

Սիրելի քույր-եղբայրներ, սրանք մի քանի մտքեր են – հարուստ՝ Քրիստոսով- նշանաբանի շուրջ, որը պետք է այս տարվա թեման լինի: Այն պետք է մեր ուշադրության ներքո լինի, իսկ այս առումով Սուրբ Հոգին դեռ շատ գեղեցիկ մտքեր է տալու: Ամեն:

Հիմնական մտքեր

- Աստված նրանց է դարձնում հարուստ, ովքեր վկայում են հավատն ու ողջախոհությունը:
- Մենք ձգտում ենք հարուստ լինել իմացությամբ, սիրով, ողորմածությամբ և խաղաղությամբ:
- Մենք մեր հարստությունները կիսում ենք մերձավորի հետ:

Մերձավորի հանդեպ սերը թվերով

Շուրջ 4 միլիոն եվրո 24 երկրում 100 նախագծի համար՝ այսպիսին է ՆԱԵ-բարեգործական օգնության հաշվեկշիռը 2017-ի համար: Թե ինչ ճակատագրեր են այս թվերի տակ թաքնված, պատմում է տարվա հրապարակային համառոտ հաշվետվությունը:

,,Աշխարհի շատ տեղերում առկա դժվարությունները մեզ անտարբեր չեն թողնում,, . ասում է հանգստի անցած գլխավոր առաքյալ Վիլհելմ Լեբերը: Եվ որպես բարգործական ձեռնարկների հովանավորման մոտիվացիա՝ շարունակում է միտքը. ,, Մերձավորի հանդեպ սերը կարող է տարբեր ձևերով տեսանելի դառնալ: Այստեղ իր դերն ունի նաև եկեղեցական բարեգործական աշխատանքը,,:

Ինչի՞ն պետք է ուղղվի այդ ծախսը

Ինչի՞ն պետք է ուղղվի այդ ծախսը2017-ի տարեկան հաշվետվության մեջ նորառաքելական կազմակերպությունը Գերմանիայից նշում է գործունեության վեց դաշտ՝

Գլխավոր մասը ավելի քան 1,7 միլիոն եվրո ծախսով ընկնում է ,, հացին,,; կյանքի հիմնական կազմակերպմանը և ապահովությանը: Այս առումով օրինակ է հանդիսանում լոլիկի կեչուպի արտադրությունը Զամբիայում, որը հոգում է ոչ միայն վեց ծառայողի, այլ նաև 1 900 գյուղական ընտանիքների աշխատանքի հարցը: 780 000 եվրոն գնում է ,,կրթության,, բնագավառ՝ խոսքը վերաբերում է դպրոցների կառուցմանն ու վերակառուցմանը, նաև երիտասարդների մասնագիտական կրթությանը և մեծահասակների մասնագիտական վերապատրաստմանը:

,, Կառուցվածքային,, ոլորտում ծախսվում է 490 000 եվրո: Այստեղ խոսքը գնում է Բանջուլում / Գամբիա/ աղբի վերամշակման և իրացման համակարգի կառուցման նախագծի մասին:

,, Աղետների,, հետևանքների վերացման համար ՆԱԵ- բարեգործական կազմակերպությունը հոգում է շուրջ 290 000 եվրոյով: Դա ծառայում է սովի դեմ պայքարին Արևելյան Աֆրիկայում, ինչպես նաև փախստականների կարիքներին և ինտեգրացիոն օգնությանը Գերմանիայում, Հունաստանում, Հորդանանում և Սերբիայում:

,,Առողջապահության,, գործում ծախսվում է ավելի քան 250 000 եվրո՝ դրանից մաս է տրվում , օրինակ, ,, մաքրությանը,, դա համաճարակների դեմ պայքարի ծրագիր է Հարավային Աֆրիկայում:

Կատարողը ,, Մասախե,, կազմակերպությունն է՝ նորառաքելական եկեղեցու բարեգործություն Հարավային Աֆրիկայում: Ոչ միայն այստեղ է աշխատում ՆԱԵ- բարեգործականը համապատասխան տարածաշրջանային եկեղեցիների կառուցման հետ միասին, այլ նաև Զամբիայում / ,, ՆԱԵՌՕ,,/ և Քենիայում/ ,,Կումեա,,/:.

Ջրի, սանիտարական կառույց ների և հիգիենայի ոլորտը կոչվում է,, Վուոշ,,: Դրա համար ծախսվելու է 90 000 եվրո: Այս գումարները ծախսվելու են Քենիայում Մուկուրու Սլումում բիոկենտրոն հիմնելու համար՝ կենտրոնական զուգարանների և լոգանքի համալիրների կեղտաջրերը հոսելու են բիոգազային կառույցներ: Այնտեղ արդյունահանվող մեթանը կծառայի լուսավորմանը, ինչպես նաև եփելու առանձին կետերին:

Վարկային աջակցություն

ՆԱԵ-բարեգործականի համար տարածաշրջանային գլխավոր կետը միանշանակ Աֆրիկան է՝ գրեթե 90 տոկոս ծախսերով: Շուրջ 2,1միլիոն եվրո գնում է Արևելյան Աֆրիկա: 1,1 միլիոն եվրո բաժանվում է Աֆրիկայի Արևմտյան, Կենտրոնական և Հարավային մասերում: Մայրցամաքների մեջ հաջրդում է Ասիան՝ 5,8 տոկոս մասնաբաժնով, Եվրոպան՝ 3,9 տոկոսով և Ամերիկան՝ 0,4 տոկոսով:.

Ֆինանսավորվում են տասը տարվա ընթացքում գործող նախագծերը՝ 98 տոկոսը նվիրատվությունների միջոցներով: Մեծ բաժինը ընկնում է անհատ նվիրատուներին՝ գործընկերության և երկարատև գործունեության շնորհիվ, ինչպես նաև լինում են որպես ժառանգություն տվողներ: Փոխադրամիջոցները ևս վարկավորվում են:

,, Մենք հպարտ ենք ՆԱԵ-բարեգործականով և ուրախ ենք մեր բազմաթիվ հովանավորների, աջակիցների և քննադատների համար,, . շեշտում է կառավարիչ Յորգ Լեսկեն իր նախաբանում: Քանի որ նրանք ,,փախստականության և միգրացիայի թեմաների վերաբերյալ տարբերակվող հայացքներ կունանեն պահի տակ տաք տեղի ունեցող քաղաքական բանավեճում ,,:

Լուսանկարը՝ ՆԱԵ Ավտարային, ՆԱԵ հարավարևելյան Ասիա, ՆԱԵSoutheastasia, NAC

Փոփոխություններ առաքյալների շրջանում

2018-ի երկրորդ կիսամյակում գլխավոր առաքյալ Շնայդերը ձեռանադրել է ինը առաքյալ, բացի դրանից, նա լիազորել է երկու նոր շրջանային առաքյալի: Մեկ առաքյալ մահացել է իր ակտիվ սպասավորության ընթացքում, յոթ առաքյալ և երկու շրջանային առաքյալ անցել են հանգստի, իսկ մեկ առաքյալ ստիպված է եղել արձակվել իր պաշտոնից:

2018-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ առաքյալների ծառայությունում գործում է 355 պաշտոնակիր: Նրանց օգնում է 253 000 սպասավոր եղբայր, ովքեր սարկավագի կամ քարոզչի ծառայություն են կատարում ամբողջ աշխարհի 59 000 համայնքում: Առաքյալների ծառայության մեջ գործում են՝ 329 առաքյալ, 9 շրջանային առաքյալի օգնական, 16 շրջանային առաքյալ և մեկ գլխավոր առաքյալ:

Ձեռնադրություններ և լիազորություններ

2018-ի հուլիսի 22-ի կիրակի օրը Քինդույում / Կոնգոյի ԴՀ/ շրջանային ավետարանիչ Կալենգա Ռոգեր Քաբենգելեն ընդունեց առաքյալի պաշտոնը /1965/: Ավելի քան 4000 քույր-եղբայրներ այդ օրը գլխավոր առաքյալի հետ հավաքվել էին ժամերգության:

Գլխավոր առաքյալ Շնայդերը ձեռնադրել է չորս առաքյալ 2018-ի հուլիսի 29- կիրակի օրը Քինշազա-Լիմեթեում / ԴՀ Կոնգո/՝ եպիսկոպոսներ Անդրե Մութանգա Սուկադին /1964/, Մերլին Վամբա Բազոլոն /1960/ և Կայեմբե Մութեբան /1966/ Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետության համար և շրջանային առաքյալ Ալդին Մակոունդի Բիֆիգա / 1978/ Կոգո Բրազզավիլլեի համար: Ժամերգությանը մասնակցում էին 9000 մասնակից տեղից և հազարավոր մասնակիցներ Միխայել Դեփների ու Չիչի Չիսեկեդիի աշխատանքային տարածաշրջանից հեռուստատեսային հեռարձակման միջոցով :

Մինչ այժմ գործող եպիսկոպոս Օսկար Սիբոթա Կալումիանան / 1964/ 2018-ի օգոստոսի 12-ի կիրակի օրը ընդունեց առաքյալի ապասավորությունը Զամբիայի համար: Ձեռնադրությունը կատարեց միջազգային եկեղեցու ղեկավարը Դարեսալամի ժամերգության ժամանակ / Թանզանիա/:

2018-ի սեպտեմբերի 30-ի կիրակի օրը գլխավոր առաքյալ Շնայդերը ժամերգություն տոնեց Բրիսբանեում/ Ավստրալիա/: Նա լիազորեց շրջանային առաքյալի օգնական Փեթեր Շուլթեին /1963/շրջանայինառաքյալիպաշտոնում՝ շրջանային առաքյալի Արևմտյան Խաղաղ օվկիանոսյան նոր հիմնված տարածաշրջանում: Ավստրալիայի, Նոր Զելանդիայի, Պապուա- Նորգվինեայի և Խաղաղ օվկիանոսային այլ կղզիների հետ միասին աշխատանքային այդ տարածաշրջանին են պատկանում նաև Չինաստանը, Հարավային Կորեան, Հոնգկոնգը, Ճապոնիան և Թայվանը:

Ֆիլիպպիների համար եպիսկոպոս Սամուել Հանդոջո Թանսահթիկնոն / 1971/ և Հնդկաստանի համար մինչ հիմա գործող շրջանային ավետարանիչ Փերմ Մոհան Ռայը / ստացան 1970/ առաքյալի պաշտոն: Ձեռնադրությունները կատարեց գլխավոր առաքյալը 2018-ի նոյեմբերի 18-ի կիրակի օրը Մանիլայում / Ֆիլիպպիներ/: Նույն ժամերգության ժամանակ եկեղեցու ղեկավարը մինչ այժմ գործող շրջանային առաքյալի օգնական Էդի Իսնուգրոհոյին /1963/ լիազորեց շրջանային առաքյալի պաշտոնը Հարավ-Արևելյան Ասիայի համար:

Մինչ այժմ գործող եպիսկոպոս Ռալֆ Վիթիչը/ 1960/ ընդունեց առաքյալի պաշտոնը 2018-ի դեկտեմբերի 23-ի կիրակի օրը: Ձեռնադրությունը կատարեց միջազգային եկեղեցու ղեկավարը Վայմարում / Գերմանիա/ անցկացված ժամերգության ժամանակ:

Հանգստի ուղարկում և պաշտոնից ազատում

Առաքյալների ծառայության մեջ 21 –ամյա գործունեությունից հետո, 2018-ի հուլիսի 21-ի կիրակի օրը առաքյալ Բենջամին Չիամալան / 1953/ ուղարկվեց հանգստի: Արարողությունը կատարեց գլխավոր առաքյալ Շնայդերը Քինդուլում/ ԴՀ Կոնգո/ անցկացվող ժամերգության ժամանակ:

2018-ի հուլիսի 29-ի կիրակի օրվա Քինշասա-Լիմետեում/ԴՀ Կոնգո/ անցկացվող ժամերգության ժամանակ եկեղեցու ղեկավարը առաքյալ Կում-Բադինգ Հանջամբային/ 1953/ և Սադիսա Կումալային /1953/ ուղարկեց հանգստի՝ տարիքով պայմանավորված: Նրանք շատ տարիներ համապատասխանաբար պատասխանատու էին 240 և 350 համայնքի համար:

Գլխավոր առաքյալի առաջադրանքով շրջանային առաքյալ Չարլես Ս Նդանդուլան 2018-ի օգոստոսի 5-ի կիրակի օրը հանգստի ուղարկեց առաքյալ Սթանլեյ Մունսակային / 1953/: Նա 26 տարի եղել է առաքյալ:

2018-ի օգոստոսի 12-ի կիրակի օրը եկեղեցու գլխավորը ժամերգություն անցկացրեց Դարեսալամում/ Թանզանիա/: Այդ ժամերգության ժամանակ, որը ամբողջ երկրում հեռարձակվում էր հեռուստատեսությամբ , հանգստի ուղարկվեց Ֆրանցիս Քարո Կացունգու Կինգուրան / 1953/ Քենիայից: Նա 21 տարի ծառայել էր որպես առաքյալ:

Առողջական վիճակի պատճառով առաքյալ Մաթթեվ Արենդսեն / 1958/ ստիպված էր դադարեցնել իր սպասավորությունը: Շրջանային առաքյալ Ջոն Լ. Քրիլը նրան մի ժամերգության ժամանակ Գուստրոուվ ծովափին / Հարավային Աֆրիկա/ 2018-ի սեպտեմբերի 23/ի կիրակի օրը գլխավոր առաքյալի առաջադրանքով ուղարկեց հանգստի:

2018-ի երկրորդ կիսամյակին երկու շրջանային առաքյալ անցան հանգստի տարիքով պայմանավորված: Հանգստի ուղարկելու առաջին արարողությունը կատարեց գլխավոր առաքյալ Շնայդերը 2018-ի սեպտեմբերի 30- կիրակի օրը Բրիսբանեում/ Ավստրալիա/: Շրջանային առաքյալ Անդրյու Հ. Անդերսենը /1951/ 30 տարվա առաքյալի ծառայություն կատարելուց հետո, որից 17-ը շրջանային առաքյալի պաշտոնում, ուղարկվեց հանգստի:

2018-ի նոյեմբերի 18-ի կիրակի օրը եկեղեցու ղեկավարը տոնեց ժամերգություն Մանիլայում / Ֆիլիպպիներ/: Շրջանային առաքյալ Ուրս Հեբայզենը /1952/ ուղարկվեց հանգստի 36 տարվա առաքելական գործունեությունից հետո, որից տասը՝ որպես շրջանային առաքյալ:

2018-ի նոյեմբերի 18-ի երկուշաբթի օրը գլխավոր առաքյալ Շնայդերը առաքյալ Սոնգսեանգ Ֆաթին /1973/ ազատեց իր պաշտոնից: Նա 2015-ից գործում էր Կամբոջայում:

2018-ի դեկտեմբերի 23-ի կիրակի օրը ժամերգության ժամանակ Վայմարում / Գերմանիա/ եկեղեցու ղեկավարը առաքյալ Ռոլֆ Վոզնիցկային /1953/ ուղարկեց հանգստի՝ տարիքով պայմանավորված :

Մահ

59 տարեկան հասակում սրտի կանգից անսպասելի մահացավ առաքյալ Ջուհուկե Հունգիթոն /1959/ Պապուա- Նորգվինեայից: Նա 2018-ի հոկտեմբերի 19-ի ուրբաթ օրը նա մեկնել էր Մադանգ նահանգ՝ հավատացյալ քույր-եղբայրների մոտ: Սգո արարողությունը անց է կացրել շրջանային առաքյալ Փեթեր Շուլթեն 2018-ի հոկտեմբերի 31-ի չորեքշաբթի օրը, Լայեում/ Պապուա-Նորգվինեա/:

ՀԻՍՈՒՍԸ ԲԺՇԿՈՒՄ Է ՄԻ ՀԻՎԱՆԴԻ ԲԵԹՀԵԶԴԱ ԿՈՉՎՈՂ ԱՎԱԶԱՆԻ ՄՈՏ

ԸՍՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ 5,1-18-Ի:

Ոչխարների ավազանի մոտ մի տեղ կար, որ եբրայերեն՝ անվանվում էր Բեթհեզդա՝ հինգ սրահներով, որոնց մեջ պառկած էր մի մեծ բազմություն հիվանդների, կույրերի, կաղերի և գոսացածների, որոնք սպասում էին ջրերի խառնվելուն, և ով ջրերի խառնվելու ժամանակ առաջինն էր իջնում, բժշկվում էր՝ հիվանդությունից նշան անգամ չպահելով:

Այնտեղ կար մի մարդ, որ 38 տարի ի վեր հիվանդ էր: Երբ Հիսուս տեսավ, որ նա պառկած ընկած է, և իմացավ, որ դա շատ ժամանակից ի ՛վեր էր, նրան ասաց. ,, Կամենու՞մ ես առողջ լինել,,:
Հիվանդը պատասխանեց նրան. ,, Տեր, ոչ ոք չունեմ, որ , երբ ջրերը խառնվեն, ինձ ավազանի մեջ իջեցնի, և մինչ ես դանդաղում եմ, մեկ ուրիշն ինձանից ավելի առաջ է իջնում,,:
Հիսուսը նրան ասաց .,, Վե՛ր կաց, վերցրու՛ քո մահիճը և գնա,,:
Եվ մարդը առողջացավ, վեր կացավ, վերցրեց իր մահիճը և ման էր գալիս, և այն օրը շաբաթ էր: Հրեաները բժշկված



մարդուն ասացին. ,, Շաբաթ օր է և օրինավոր չէ, որ վերցնես մահիճդ,,: Եվ նա ասաց նրանց.,, Նա, որ ինձ բժշկեց, նա ինձ ասաց՝ վերցրու քո մահիճը և գնա,,: Նրան հարցրին ու ասացին. ,, Ո՞վ է այն մարդը, որ քեզ ասաց՝ վերցրու քո մահիճը և շրջիր,,: Իսկ բժշկվածը չէր իմանում, թե ով է նա:

Այնուհետև Հիսուս տաճարում գտավ բժշկված մարդուն ու ասաց նրան. ,, Ահավասիկ առողջացար, այլևս մի մեղանչիր, որպեսզի մի ավելի չար բան չպատահի քեզ,,: Մարդը գնաց և հրեաներին պատմեց, թե՝ Հիսուս էր, որ ինձ բժշկեց:



Աղբյուրը՝ Ավետիքը՝ Մեզ՝ մանուկներիս,, հրատարակություն 11/2018; ձևավորումը Միրեյա Ֆորտունատոյի

ԱՅՑ ՄԱՏՎԵՅԻՆ՝ ՏԱՇՔԵՆԴՈՒՄ / ՈՒԶԲԵԿՍՏԱՆ/)

Տաշքենդը Ուզբեկստանի մայրաքաղաքն է, այստեղ ապրում է երեք միլիոն մարդ: Նաև ես՝ Մատվեյս, իմ ընտանիքի հետ ապրում եմ այստեղ: Ուզբեկստանը պետություն է Ասիայում: Երկիրը երկար ժամանակ Սովետական Միության մաս է կազմել, սակայն 1991-ից այն անկախ է շենքում: Իմ

Մենք ապրում ենք եկեղեցու հայր Ալեքսանդրը քարոզիչ է մեր համայնքում: Իմ մայր Տատյանան և ես երգում ենք երգչախմբում, մենք հաճույքով ենք երգում: Դասերից հետո մայրս հոգ է տանում մեզ՝ երեխաներիս համար: Իմ քույր Սոֆիան հաճախում է յոթերորդ դասարան, ես ութ տարեկան եմ և ավարտել եմ երկրորդ դասարանը, իսկ իմ փոքր եղբայր Արսենին ավարտել է առաջին դասարանը:

Մենք ապրում ենք Տաշքենդում, բայց ես ծնվել եմ Սամարղանդում: Այս քաղաքը մեծ պատմություն ունի, որի մասին ես ուզում եմ մի քիչ պատմել ձեզ: Սամարղանդը աշխարհի հնագույն քաղաքներից մեկն է, այն հիմնադրվել է Ք. ա. 6/7-րդ դարերում: Այն ժամանակ այն կոչվում էր Աֆրոզիաբ: Հենց այն ժամանակվա Աֆրոզիաբ բնակավայրի սահմանի մոտ է գտնվում աստվածաշնչյան մարգարե Դանիելի գերեզմանը, ով Աստծո օգնությամբ առյուծների գուբից ազատվեց: Այսօր գերեզմանը մուսուլմանների ու քրիստոնյաների կողմից պատվով է պահպանվում:



Ուզբեկստանի ազգային կերակրատեսակը կոչվում է փլով: Դա մի համեղ ուտեստ է՝ մսով, բրնձով, սխտորով, սոխով և գազարով: Յուրաքանչյուր քաղաք ունի փլովի իր բաղադրատոմսը: 2017-ի սեպտեմբերի 8-ին Տաշքենդում 50 խոհարար պատրաստեց աշխարհի ամենաշատ փլովը, այն կշռում էր 7 360 կգ և ռեկորդ սահմանեց Գինեսի գրքում: Խոհարարները այն պատրաստել էին վեց ժամվա ընթացքում և օգտագործել էին 1 500 կգ տավարի միս, 400 կգ հորթի միս, 1 900 կգ բրինձ և 2 700 կգ գազար: Մեր համայնքի տոնի ժամանակ ևս պատրաստվում է փլով, այն ինձ շատ է դուր գալիս:

Վերջին Սուրբ Ծննդյան տոներին մենք՝ երեխաներս, երեք ճագար նվեր ստացանք, որոնց հետ մենք հաճախ ենք խաղում: Բացի այդ, ես հաճույքով ֆիգուրներ եմ պատրաստում կամ խաղում եմ իմ ընկերների հետ:.

Աղբյուրը՝ Ամագիր՝ Մենք՝ երեխաներս; հրատարակություն 11/2018, լուսանկարները՝ վանավոր, ©efesenko, zukamilov stock.adobe.com

Պաշտոններ, շնորհներ և ծառայություններ Քրիստոսի եկեղեցում:

Քրիստոսի եկեղեցի՝ ո՞վ կամ ի՞նչ է դա ընդհանրապես: Եվ ինչպե՞ս կարող է այն առանց առաքյալների գործել: Պատասխանը տալիս է գլխավոր առաքյալի հետևյալ ուսուցողական շարադրանքը:

Պողոսն օգտագործում է մարմնի պատկերը եկեղեցու մասին խոսելու համար: Հավատացյալները Քրիստոսի մարմնի անդամներն են՝ նրանցից յուրաքանչյուրն ունի տարբեր ֆունկցիա: Այս պատկերի միջոցով նա չի ուզում տալ եկեղեցու սահմանումը, այլ նկարագրում է մի քանի ասպեկտներ՝

- Քրիստոսը մարմնի գլուխն է, այսինքն՝ համայնքի / Կողոսացիներին 1,18/, ինչպես մարմինն է իրականացնում գլխում կայացված որոշումները, այդպես էլ եկեղեցին է ծառայում Քրիստոսին:
- Մարմնի բոլոր անդամները տարբեր են, նրանք նույն առաջադրանքը չունեն / Հռոմեացիներին 12,4/, սակայն նրանք գործում են միասին և ծառայում են միմյանց:
- Մարմնի կազմավորման համար Աստված առանձին շնորհներ և ծառայություններ է տվել / Եփեսացիներին 4,11-13; Հռոմեացիներին 12,6-8; Կորնթացիներին Ա 12,4-11/:
- Եկեղեցու զարգացումը որպես Քրիստոսի մարմին՝ կատարվում է Աստծո կամքով և գործունեությամբ / Կողոսացիներին 2,19/:

Քրիստոսի եկեղեցին կազմված է բոլոր հավատացյալներից, ովքեր մկրտությամբ, հավատով և խոստովանությամբ պատկանում են Քրիստոսին: Սա կարող ենք մենք ըմբռնել միայն հավատի շնորհիվ:

Պողոսի ժամանակների քրիստոնյաները խմբված էին առաքյալների շուրջը, այն ժամանակ չկային շատ եկեղեցական միություններ կամ դավանաբանություններ, չնայած դրան՝ Պողոսը ևս չէր կարող իմանալ, թե որ քրիստոնյաներն են իսկապես պատկանում Քրիստոսի եկեղեցուն՝ միայն Աստված կարող է յուրաքանչյուրի հավատի ճշմարտացիությունը տեսնել:

Այսօր մենք առճակատված ենք քրիստոնեական եկեղեցիների բազմազանությանը: Այս առումով,

Լուսանկարը՝ Բյորն Ռենցի

Քրիստոսի եկեղեցին չի կարող շփոթվել այդ կառույցների կամ եկեղեցական միությունների հետ: Այն, այլոց թվում, բաղկացած է կաթոլիկ, նորառաքելական, բողոքական կամ օրթոդոքս քրիստոնյաներից, այնուամենայնիվ, այն ոչ կաթոլիկ, ոչ նորառաքելական, ոչ բողոքական կամ ոչ էլ օրթոդոքս եկեղեցի է, ոչ էլ այդ բոլոր եկեղեցիների ընդհանրությունը:

Վաղ շրջանի եկեղեցու պաշտոններ, շնորհներ և ծառայություններ

Հիսուս Քրիստոսը իր եկեղեցին հիմնել է առաքյալների միջոցով: Նա ընտրել է առաքյալներ, լիազորել, օրհնել և և սրբացրել, նրանց է վստահել խորհուրդների նվիրաբերումը: Առաքյալների ծառայության միջոցով հավատացյալները մոտենում են փրկությանը:

Առաքյալների ծառայությունից բացի Աստված եկեղեցին կազմավորել է նաև շնորհներով և ծառայություններով: Նոր կտակարանն այդ մասին հետևյալն է մեջբերում՝

- Հռոմեացիներին գրված թղթի 12-րդ գլուխը հիշատակում է մարգարեական խոսքը, ուսմունքը, հորդորը, համայնքի գլխավորումը, գթասրտությունը:
- Կորնթացիներին Ա 12,8-10-ում խոսքը իմաստության, իմացության, հավատի, բժշկման, հրաշքների, մարգարեական խոսքի, հոգիները զանազանելու, տարբեր լեզուներով խոսելու, թարգմանության մասին է: Դրանից հետո /տող 28/ խոսքը առաքյալների, մարգարեների, ուսուցիչների, հրաշագործությունների, բժշկողների, օգնողների, համայնքի ղեկավարների և տարբեր լեզուներով խոսողների մասին է:
- Եփեսացիների 4-ում խոսվում է առաքյալների, մարգարեների, ավետարանիչների, հովիվների և ուսուցիչների մասին:

Բոլոր այդ շնորհներն ու կարողությունները Աստված ողորմածությամբ նվիրում է նրանց, որոնց նա ընտրել է իր եկեղեցու ծառայության համար: Պողոսն օգտագործում է մարմնի պատկերը, որպեսզի բացատրի, որ ոչ բոլորն են ընդունել նույն շնորհները, բայց յուրաքանչյուրը իր շնորհը ներ է դնելու բոլորին ծառայելու գործում: Որպես նույն մարմնի անդամներ՝ հավատացյալները կանչված են վկայելու հնազանդությունը/Հռոմեացիներին 12,3/, միաբանությունը / Եփեսացիներին 4,3/ և համերաշխությունը / Կորնթացիներին Ա 12,26/:

Եկեղեցիներ հիմնելու հանձնարարականը Հիսուսի կողմից ընդունած առաքյալները ձեռնադրեցին վաղ շրջանի եկեղեցու սարկավագներ, ովքեր նրանց օգնում էին իրենց աշխատանքում: Հետագայում նրանք կազմավորեցին եկեղեցին նրանով, որ տեղական առաջնորդներ կարգեցին / ավագ կամ եպիսկոպոս անվանելով/ և բացատրեցին, թե ինչպես ներդնեն տարբեր շնորհները եկեղեցում / Կորնթացիներին Ա 14,1; Պետրոս 4,10/:

Իհարկե, այս գործում նկատելի է, որ առաքյալների նամակները պարզաբանում են, որ Քրիստոսի եկեղեցին իր պատմական իրականության մեջ կատարյալ չէր, քանի որ կազմված էր ոչ կատարյալ տղամարդկանցից և կանանցից:

Քրիստոսի եկեղեցու շնորհներն ու ծառայությունները առաքյալների մահից հետո

Վաղ շրջանի եկեղեցու առաքյալների մահից հետո առաքյալների ծառայությունը դարեր շարունակ չէր գործում: Ուստի, այլևս հնարավոր չէր՝

- հոգևոր պաշտոնի ձեռնադրել ծառայողների, այսինքն՝ նրանց Երրորդություն Աստծո անունով սրբացնելը, օրհնելը և լիազորելը;
- նվիրաբերել Սուրբ Հոգու շնորհները;
- ստանալ լիառատ ողորմածություն և օրհնանք Սուրբ Հաղորդության ժամանակ, որը կապված է առաքյալի կամ նրա կողմից առաջադրված սպասավոր եղբոր միջոցով նշխարի բաժանման հետ:

Այնուամենայնիվ, Աստված հոգում է Քրիստոսի եկեղեցու համար: Նրանք, ովքեր հավատում են Հիսուս Քրիստոսին, կարող են ջրով մկրտվել և անդամակցել Քրիստոսի մարմնին: Սուրբ Հոգին շարունակում է իր փրկարար ներգործությունը նրանով, որ Քրիստոսի եկեղեցու անդամներին օժտում է Ավետարանի տեղեկացման, գիտելիքների խորացման և եկեղեցու զարգացման համար անհրաժեշտ շնորհներով:

Հավատարիմ քրիստոնյաներն իրենց շնորհները ներ են դնում Քրիստոսին և նրա եկեղեցուն ծառայելու գործում: Նրանք տեղեկացրել են Ավետարանը, ուսուցանել են հավատացյալներին, ուսումնասիրել են Սուրբ գիրքը և ավելացրել գիտելիքները, կազմակերպել և ղեկավարել են եկեղեցական համայնքները և օգնել են կարիք ունեցողներին: Այդ ողջ ժամանակահատվածում կարողացել է Քրիստոսի եկեղեցին իր պատմական իրականացումը զարգացնել, քանի որ ջրով մկրտվածները այն շնորհները, որոնք նրանք ստացել են Աստծուց, ներ են դրել Քրիստոսի մարմնի համար ծառայությանը:

Մյուս կողմից, եկեղեցու անդամների ոչ կատարյալ լինելը հիմքն ու պատճառն էր բազմաթիվ թերությունների, որոնց պատճառով, օրինակ, բազմաթիվ քրիստոնյաներ ընկան բաժանման տանող անախորժության մեջ:

Խմբագրական
Հրատարակիչ՝ Ժան-Լյուք Շնայդեր, Իուբերլանսսթրասսե 243,8051 Ցյուրիխ /Շվեյցարիա
Ֆրիդրիխ Բիշոֆ ՓԲԸ հրատարակչություն, Ֆրանկֆուրտյան փողոց 233,63263 Նոյ- Իզենբուրդ/ Գերմանիա
Խմբագիր՝ Փետեր Յոհաննինգ

Տարբեր անդամներ, տարբեր ծառայություններ

Քրիստոսի մարմնի ոչ մի անդամ ավելի լավը կամ ավելի կարևոր չէ, քան մյուսները: Նրանք, պարզապես, ունեն տարբեր առաջադրանքներ – գլխավոր առաքյալը Քրիստոսի եկեղեցու և այն մասին, թե ինչ արտահայտություն է գտնում այն Նորառաքելական եկեղեցում:

Առաքյալների ծառայության վերականգնումից ի վեր կարողանում են ջրով մկրտվածները ընդունել Սուրբ Հոգու շնորհները: Նրանով, որ նրանք ճաշակում են Հիսուսի մարմինն ու արյունը, նրանք ունենում են կատարյալ մուտք դեպի Աստծո Որդու հետ կյանքի միասնություն: Սպասավորները նորից կարողանում են լիազորվել, օրհնվել և սրբացվել եկեղեցու ծառայության համար:

Հավատը կենդանի, ներկա առաքյալների հանդեպ և Սուրբ Հոգու շնորհները ողորմածության ընծաներ են, որոնց Աստված նվիրում է նրանց, ովքեր ընտրվել են դրա համար: Նրա որոշումը վեր է մարդկային հասկացողությունից. ,, Բայց արդ, Աստված դրեց անդամները,, նրանցից ամեն մեկը՝ մարմնի մեջ, ինչպես որ կամեցավ,,/ Կորնթացիներին Ա 12,18/:

Քրիստոսի հանդեպ հավատը խոստովանել խոսքով և գործով

Եկեղեցին որպես Քրիստոսի մարմին՝ բաղկացած է միաժամանակ ջրով մկրտվածներից և ջրով ու Սուրբ Հոգով վերստին ծնվածներից: Այդ մարմնի բոլոր անդամները կոչված են այն բանի համար, որ խոստովանեն իրենց հավատը Հիսուս Քրիստոսի հանդեպ և խոսքով ու գործով Աստծո բարեգործությունները նրանց տեղեկացնեն/Պետրոս Ա 2,9/: Բոլորը պետք է սիրով վերաբերվեն միմյանց և աջակցեն Հոգով միությունը խաղաղության կապով պահպանելուն/ Եփեսացիներին 4,2,3/:

Քրիստոսի մարմնի անդամները, որոնք ընդունել են Սուրբ Հոգու շնորհները, ավելի ,, լավը,, չեն, քան մյուսները, որպեսզի մարմնի մեջ մնան՝ աչքը ավելի ,,լավը,, չէ, քան ոտքը: Նրանք ընտրվել են մի առանձնահատուկ ծառայության իրականացման համար՝ նրանք պետք է Քրիստոսի գալստյան մոտ լինելը տեղեկացնեն, վկայեն կենդանի առաքյալների գործունեությունները, իրենց մեջ տեղ տան Սուրբ Հոգուն, յուրացնեն աստվածային առաքինությունները և այսպես նախապատրաստվեն Քրիստոսի գալստյանը: Քանի որ Աստված իր սիրով նրանց սրտերում է դրել Սուրբ Հոգու շնորհները / Հռոմեացիներին 5,5/, նա առանձնահատուկ ձևով սպասում է նրանցից, որ նրանք իր այդ սերը ցույց տան մյուսների նկատմամբ:

Ջրից և Սուրբ Հոգուց վերստին ծնվածները, որոնց Աստված ընտրել է հոգևոր պաշտոնի համար- առաքյալները և նրանց կողմից ձեռնադրված սպասավորները- Հիսուսի միջոցով լիազորված են Ավետարանը տարածելու, հավատացյալներին իր գալստյանը նախապատրաստելու, խորհուրդները նվիրաբերելու և մեղքերին քավություն տալու:

Շնորհները բազմապատկել և ներդնել

Աստված Քրիստոսի եկեղեցին սպառազինում է այն շնորհներով, որի կարիքը նա ունի: Նա ջրով և Հոգով վերստին ծնվածներից, նաև ջրով մկրտվածներից ընտրում է եկեղեցու մի քանի անդամներ, որպեսզի նրանց վստահի հատուկ շնորհներ, ինչպես օրինակ՝ ավետարանականացման շնորհը,

Լուսանկարը՝ Մարսել Ֆեդրի

ուսուցման, իմացության, իմաստության կամ մերձավորին օգնելու շնորհը: Քրիստոսի մարմնի բոլոր անդամները կոչված են ընդունած շնորհները բազմապատկելու և ներդնելու, յուրաքանչյուրը այն հավատի չափով, որ Աստված բաժանել է / Հռոմ. 12,3/ հեզությամբ ու հնազանդությամբ:

Նաև այն հավատացյալները, ովքեր այսօր պատկանում են Քրիստոսի եկեղեցուն, կատարյալ չեն՝ անկախ իրենց վստահված շնորհներից և եկեղեցու ներսում կատարած ֆունկցիայից: Նրանց մոլորություններն ու սխալները պատճառ են հանդիսանում Քրիստոսի տեսանելի եկեղեցու թերությունների:

Նախապատրաստվել Քրիստոսի գալստյանը

Քրիստոսի եկեղեցու մասին մեր պատկերացումը պետք է պայմանավորի մեր վերաբերմունքը քրիստոնեական այլ եկեղեցիների նկատմամբ:

Նորառաքելական եկեղեցու ուսմունքը հիմնվում է Սուրբ Հոգու լույսի ներքո Սուրբ գրքի մեկանաբանության վրա: Այն արծարծվում է Նորառաքելական եկեղեցու դավանաբանության մեջ: Ինչ վերաբերում է Քրիստոսի եկեղեցուն, ապա մենք հավատում ենք հետևյալին՝

- Աստված կանչում է նրանց, որոնց նա ընտրել է, որպեսզի նրանք ջրով մկրտությունն ընդունեն և այդպիսով անդամակցեն եկեղեցուն / Եփեսացիներին 4,1/:
- Բոլոր ջրով մկրտվածները, ովքեր հավատում են Հիսուս Քրիստոսին և խոստովանում են նրան, պատկանում են Քրիստոսի եկեղեցուն:
- Աստված Քրիստոսի եկեղեցու անդամներին վստահում է հոգևոր շնորհներ և նրանցից պահանջում, որ նրանք դրանցով ծառայեն Աստծուն և եկեղեցուն:
- Քրիստոնեության ողջ պատմության ընթացքում մինչև այսօր, հավատով և Աստծո սիրով լցված՝ քրիստոնյաները ընդունած շնորհները ծառայեցրել են Քրիստոսին և աստվածային կամքի համաձայն աջակցել են Քրիստոսի եկեղեցու զարգացմանը և փրկության պլանի առաջընթացին:
- Առաքյալները և նրանց կողմից ձեռնադրված սպասավորները կանչվել են Աստծո կողմից և լիազորվել այն բանի համար, որ հավատացյալներին նախապատրաստեն Հիսուսի գալստյանը և նրանք ընդունեն փրկությունը:
- Առաքյալների հանդեպ հավատը և Սուրբ Հոգու շնորհները առանձնահատուկ շնորհներ են, որոնք Աստված նվիրում է Քրիստոսի եկեղեցու անդամներին, որոնց նա դրա համար էլ ընտրել է:
- Հավատացյալները, ովքեր ընդունել են այդ շնորհները, կանչված են Աստծո կողմից՝ իրականացնելու մի առանձնահատուկ առաջադրանք եկեղեցում:
- անդամներն են, միմյանց հետ համերաշխ են և հաղթահարում են իրենց տարբերությունները, որպեսզի միմյանց հանդեպ լինեն Քրիստոսի սիրով լի:

Խաղաղության կապով Հոգու միություն

Այս հիմքի վրա մենք պետք է մեր վերաբերմունքը այլ քրիստոնյաների և այլ քրիստոնեական եկեղեցիների հանդեպ զարգացնենք:

Մենք խորին շնորհակալությամբ ենք լցված անցյալի և ներկայի բոլոր քրիստոնյաների հանդեպ, ովքեր Աստծո կողմից ընդունած շնորհները ծառայեցել են Քրիստոսին և նրա եկեղեցուն: Այս առումով, մենք հատկապես հիշում ենք ավետարանականացման, ուսմունքի, իմացության կամ գթասրտության շնորհի մասին:

Որպես Քրիստոսի մարմնի անդամներ՝ նորառաքելական քրիստոնյաների փափագը բոլոր քրիստոնյաների համար տրված առաջադրանքը իրականացնելն է, Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատի խոստովանումը և Աստծո բարեգործությունները խոսքով ու գործով տեղեկացնելը / Պետրոս Ա 2,9/: Նրանք հավատում են իրենց վերստին ծնվելուն ջրով և Հոգով, դրա համար էլ նրանց սուրբ առաջադրանքն է՝ մյուսներին իրենց միջոցով Քրիստոսի սերը ապրել տալը: Մերձավորի հանդեպ սիրուց ելնելով՝ նրանք տեղեկացնում են նաև Տիրոջ անմիջնորդ գալստյան մասին և վկայում են կենդանի առաքյալների գործունեությունը, այս առումով նրանք պատշաճ հարգանք են ցույց տալիս այն քրիստոնյաներին, ովքեր իրենց հավատը կիսում են:

Վերջում ցանկանում եմ հետևյալ խորհուրդը տալ՝ մենք պետք է մյուս քրիստոնյաների հանդեպ մեր վերաբերմունքը Պողոս առաքյալի խոսքերի համաձայն ձևավորենք. ,, Արդ, աղաչում եմ ձեզ, ես՝ Տիրոջ համար բանտարկվածս, որ ընթանաք այնպես, ինչպես վայել է այն կոչմանը, որին կոչվեցիք, կատարյալ խոնարհությամբ, հեզությամբ և համբերությամբ հանդուրժեցեք միմյանց սիրով, ջանացեք պահել հոգու միությունը խաղաղության կապով,, / Եփեսացիներին 4,1/:

Նախատեսում

07.04.2019	Ամստերդամ (Նիդերլանդներ)
14.04.2019	Բանգուի(Հանրապետություն Կենտրոնական Աֆրիկայում/)
19.04.2019	Բազել(Շվեյցարիա)
21.04.2019	Լինդաու (Գերմանիա)
11.05.2019	Քեյփ Թաուն(Հարավային Աֆրիկա)
12.05.2019	Քեյփ Թաուն (Հարավային Աֆրիկա)
19.05.2019	Գյոթեբուրգ (Շվեդիա)
26.05.2019	Բրանդենբուրգ(Գերմանիա)
02.06.2019	Դյուսսելդորֆ (Գերմանիա)
09.06.2019	Գոսլար(Գերմանիա)
22.06.2019	Սանթո Դոմինգո(Դոմինիկյան Հանրապետություն)
23.06.2019	Լեոգանե(Հաիթի)
30.06.2019	Օբերհաուզեն(Գերմանիա)

New Apostolic Church
International